

Լիլիթ Կ. Եփրեմյան
Արվեստագիտության թեկնածու

ԷԴՎԱՐԴ ՄԻՐՋՈՅԱՆ. ՄԱՐԴՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Բացառիկ անհատի և մեծ կոմպոզիտորի հիշատակին*

Մարդը

2012 թվականի հոկտեմբերի 5-ին մեծանուն կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի վախճանն ազդարարող լրատվությունը հեղեղվեց ֆեյսբուքյան արձագանքներով, որոնց իմաստը մեկն էր. նա չի մահացել՝ անմահացել է...

91 տարվա բեղմնավոր կյանք, լի շրջադարձային, նորարարական ընդլզումներով թե՛ ստեղծագործական և թե՛ հասարակական ոլորտում: Միրզոյանի միտքը մնաց պայծառ մինչև երկրային կյանքի վերջին օրերը: Նրա խոսքը շարունակեց փայլատակել՝ ապշեցնելով խորթափանցությամբ, անկեղծությամբ, յուրօրինակ սրամտությամբ, սիրով և «միրզոյանական» անկրկնելիությամբ: Ստեղծագործեց մինչև մահը և ոչ միայն երաժշտությամբ:

Միրզոյանը մեկն էր այն ընտրյալներից, ում Աստված վստահել էր երաժշտության անհուն պարզության գաղտնիքը, ուստի կարծում էինք՝ նա միշտ պիտի լինի մեր կողքին և չսխալվեցինք, քանզի այսօր էլ միրզոյանական ոգին սավառնում է համերգային դահլիճներում, հարազատ կոնսերվատորիայում, Կոմպոզիտորների տանը... Նրան են նվիրվում կատարումներ, նրա անունով լուսավորվում են բազմաթիվ մշակութային ծրագրեր և նախաձեռնություններ:

Դրանց թվում է նաև ռուս և հայ մտավորականների՝ ՀՀ Նախագահին ուղղված նամակը, ուր առաջարկվում է Դիլիջանում գտնվող Կոմպոզի-



Դ (Տ) քառի, թիվ 4 (40) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2012

ՎԷՄ համահայկական հանդես

* Հոդվածն ընդունվել է տպագրության 19.11.2012:

տորների ստեղծագործական տունը, որը Միրզոյանի իսկական «հոգեգավակն է», կոչել նրա անունով: Դիմողների թվում են Վալերի Գերգիևը, Մայա Պլիսեցկայան, Ռոդիոն Շչեդրինը, Լեքսո Թորաձեն, Յուրի Բաշմետը, Ալեքսեյ Սիմոնովը, Սոս Սարգսյանը, Սերգեյ Համբարձումյանը, Հովհաննես Չեքիջյանը, Տիգրան Մանսուրյանը և ուրիշներ: Բայց Կոմպոզիտորների միության կողմից, որը Միրզոյանը ղեկավարեց 35 տարի անընդմեջ իսկական նվիրյալի առաքելությամբ, ինչ-ինչ պատճառներով այդ նախաձեռնությանը դեռևս ընթացք չի տրվում...

Կենդանության օրոք Միրզոյանին միշտ մեղադրել են չափազանց քիչ ստեղծագործելու մեջ: Հիմա, երբ «ծառը կտրված է», ակներև դարձավ, թե ինչ իսկայական հարստություն է մեզ թողել: Նա ուղղակի ստեղծագործող չէր՝ ճանապարհ հարթող կոմպոզիտոր էր, որն իր ողջ հասակով կանգնեց մեր ազգի ընտրյալների կողքին իր կատարած գործի իսկայական ծավալով և անվիճելի կարևորությամբ: Բայց Միրզոյանը նախ և առաջ մնաց պատմության մեջ իբրև մեծատառով **ՄԱՐԳ**՝ սիրահարված իր հայրենիքին և ժողովրդին: Միրզոյանի համար լավ հայ լինելու նախապայմանը լավ մարդ լինելն էր: Նրա հանդգամբ վատ մարդը չէր կարող լինել լավ հայ և երբեք բարձունքի չէր հասնելու կոմպոզիտորական արվեստում, որը միայն մաքրամաքուր հոգու հայելին կամ արձագանքն է իրականում:

Նա սկսեց իր ստեղծագործական դժվար ուղին վարանելով, անվստահ քայլերով և մինչև վերջին օրերը՝ հակառակ բոլոր հաջողություններին և համբավին, ամբողջությամբ չհավատաց իր տաղանդի ուժին: Գնաց՝ կասկածը սրտում, թե արդյո՞ք մնայուն են իր գործերը, արդյո՞ք ասելիք ունեն նոր սերունդներին այսօրվա անհանգիստ և դաժան ժամանակներում: Եվ հակառակը՝ բավարարված էր իր ուսանողների աշխատանքով: Հպարտանում էր նրանով, որ երկար տարիների մանկավարժական գործունեության ընթացքում գրեթե 100 աշակերտից և ոչ մեկին չի ստիպել ընդօրինակելու իր ձեռագիրը՝ հորդորելով գնալ ինքնուրույն ճանապարհով: Ստեփան Զրբաշյան, Խաչատուր Ավետիսյան, Ավետ Տերտերյան, Զիվան Տեր-Թադևոսյան, Կոնստանտին Օրբելյան, Մարտին Վարդազարյան, Լևոն Չաուշյան, Վաչե Շարաֆյան, Արմեն Մարտիրոսյան՝ որքան տարբեր են այս աստղային անունները հայ ստեղծագործական մտքի հարուստ ներկայանակում: Բայց Էդվարդ Միրզոյանը կյանքի և երաժշտության ճանապարհով ուղղորդում էր ոչ միայն իր աշակերտներին: Նա վաստակեց հայ երաժշտության **պատրիարքի** կոչումը՝ տասնամյակներ շարունակ ղեկավարելով հայրենիքում և Սփյուռքում հայ կոմպոզիտորական մտքի և կատարողական արվեստի զարգացման ընթացքը, հասցնելով այն փայլուն մակարդակի, աշխարհի հետ հավասարը հավասարի խոսելու կարողության:

Հասարակական, պետական գործչի պաշտոնները, անձնական բարձր հեղինակությունը ծառայեցրեց իր ժողովրդին՝ հիմնելով միանգամից երկու բնակելի շենք՝ կոմպոզիտորների և երաժշտագետների բեղմնավոր ստեղծագործական գործունեությունն ապահովելու համար: Սակայն նրա կազմակերպչական տաղանդի գլուխգործոցն էր Դիլիջանի Կոմպոզիտորների տունը՝ մի շինություն, ուր գրվեց ազգային մշակույթի բազմախոսուն

պատմությունը: Ահա թե ինչպես է գնահատում այն երաժշտագետ Ա. Սարյանը. « [Այստեղ ստեղծվեցին] ոչ միայն հայ կոմպոզիտորների այս ու այն գլուխգործոցները, այլև ստեղծագործական այդ տանը սիրահարված բազմաթիվ ճանաչված օտարազգիների բազում երկեր: Մեծ ճանաչում ստացած Գիա Կանչելին այսօր հպարտությամբ և երախտագիտությամբ է նշում, որ իր վեց սիմֆոնիաները ստեղծվել են Դիլիջանի ստեղծագործական տանը, անգլիացի աշխարհահռչակ Բենջամին Բրիտտենը զարմանքով էր ասում, թե աշխարհում ոչ մի տեղ ստեղծագործական այսպիսի տուն չի կառուցված, իսկ ռուս նշանավոր երաժշտագետ, կոմպոզիտոր Յուրի Տյուլինը այս շինությունը սրամտորեն անվանում էր «Ռայկում», ասել կուզեր՝ “Рай композиторов” («Կոմպոզիտորների դրախտ» – Լ. Ե.): [...] Բացի երաժշտությունից այստեղ կերտվում էր նաև ժողովուրդների ստեղծագործական բարեկամությունը, որը հյուսվում էր մեկը մյուսի երաժշտության իմացությամբ ու արժեվորմամբ: Եվ այդ ամենի կենտրոնում էղվարդ Միրզոյանն էր: Եվ ոչ միայն մենք բոլորս՝ այնտեղ ստեղծագործողներս ու աշխատողներս էինք զգում նրա ջերմեռանդ սերն ու ոգևորությունը ամենի նկատմամբ, որ այնտեղ իրագործվում էր, այլև՝ այդ հսկա տարածության յուրաքանչյուր քարը, թուփն ու ծառը: Այսօր էլ, երբ ոտք ես դնում այդ տարածությունը, քեզ թվում է, որ այդտեղ թևածում է էղվարդ Միրզոյանի ոգին»:

Նա գնաց, և իրեն հրաժեշտ տվող հոծ բազմության ամեն մի անհատ էղվարդ Միրզոյանի հետ հարաբերությունների իր մտերմիկ, անձնական, առանձնահատուկ պատմությունն ուներ:

Նա անցնում էր դահլիճի ձեմասրահով, ամեն քայլափոխի կանգ առնում՝ պայծառ ժպիտը դեմքին: Եվ ոչ մի բան չէր ակնարկում այն մասին, որ այդ պարզ ու յուրաքանչյուրին հասանելի մարդն իր հոգու անըմբռնելի խորությամբ մեկ այլ զգայական աշխարհից է: Նա ունայն կենցաղային մանրուքներով էր զբաղված ու նաև կանխատեսման ունակությամբ էր օժտված՝ գուշակելով սոցիալական և բնական աղետների, մարդկային ճակատագրերի և ստեղծագործական դրոնումների ուղղվածությունը: Սակայն նա հրաշագործ չէր, պայծառատես չէր. նրա գաղտնիքը հզոր ինտուիցիան և մեծ, սիրող սիրտն էր:

Մենք չափից ավելի ենք ընտելացել այն իրողությանը, որ Միրզոյանի ստեղծագործական անհատականությունը երիզվում է իր հանճարեղ նախորդների, ընկերների, սաների և հետնորդների հոծ խմբի անունների հետ: Սակայն իրեն հատուկ պայթյունավտանգ էներգետիկ լարվածությամբ էղվարդ Միրզոյանի անունը վեր խոյացավ, առանձնացավ կենսագրական իրողությունից՝ ներխուժելով բացարձակի ոլորտը: Նրա «մեկական» ստեղծագործությունները՝ Կվարտետը, Սիմֆոնիան, «Էպիտաֆիան» և այլ գործեր հայտնվեցին 20-րդ դարի կոմպոզիտորական մտքի մարաթոնյան մրցավազքի առաջին շարքերում: Միրզոյանի երաժշտությունը թևակոխեց նոր հարյուրամյակ՝ երկխոսություն վարելով արդի իրականության դիրքերից:

1 Սարյան Ա. , Մտքի և սրտի վկայությամբ, «Ազգ», 1 նոյեմբերի 2012 թ.:

2. Գործը

Էդվարդ Միրզոյանը հոգու բացառիկ խոր և նրբազգաց տոնայնություն է, մարդկության ինքնավերլուծության և ինքնաձանաչման ֆենոմենալ հետազոտող: 20-րդ դարում շատ էին արվեստի բարենորոգիչները, սակայն, ինչպես և բոլոր ժամանակներում, եզակի արվեստագետների հաջողվեց բացահայտել մարդկային հոգու անհուն խորքերը:

Առեղծված... Հենց այս հասկացության միջոցով կփորձեն բացահայտել Էդվարդ Միրզոյան մարդու և կոմպոզիտորի յուրօրինակությունը, քանզի նա իր մեջ միաձուլում էր անհամատեղելին, ստեղծելով նոր՝ անկրկնելի որակ, որն օրինաչափություն է այլևս հետագա սերունդների համար:

Պատերազմից անմիջապես հետո՝ 1940-ականների երկրորդ կեսին, մի խումբ երիտասարդ հայ կոմպոզիտորներ գործուղվեցին Մոսկվա՝ Հայաստանի մշակույթի տուն, հաստատելու համար հայոց հողի ստեղծագործական ուժն ու կարողությունը: Նրանք՝ Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Ադամ Խուդոյանը, Էդվարդ Միրզոյանը և Մոսկվայի կոմսերվատորիայի սան Ղազարոս Սարյանը կազմեցին մեր «Հզոր խմբակը», որն իր հետ բերեց ազգային երաժշտության զարգացման նոր ալիքը: Եվ տարիների ընթացքում հայ երաժշտագիտության մեջ ամրապնդվեց ինչպես նրանց, այնպես էլ մյուս սերնդակիցներին (Է.Հովհաննիսյան, Է.Բաղդասարյան, Է.Աբրահամյան և ուրիշներ) բնորոշող «հետխաչատրյանական սերունդ» եզրը: Այդ հասկացությունը, որպես կանոն, դիտարկվում է մեկ ընդհանուր՝ խաչատրյանական ոճի համակարգում: Համարվում է, որ 1940-ականների սերնդի երաժշտամտածողությունը հանդիսանում է մեծն Արամ Խաչատրյանի գրելաոճի հետևողական զարգացումը, և միայն 1960-ականների կեսին՝ հայկական մոդեռնիզմի ձևավորմամբ (Տ.Մանսուրյան, Ա.Զոհրաբյան, Մ.Իսրայելյան, Ա.Տերտերյան և ուրիշներ) փոփոխության է ենթարկվում դարի ոճաբանական ուղեցույցը՝ վերադառնալով դեպի Կոմիտասի ավանդույթները, դեպի խորքային հայեցի մտածողությունը, որն իբրև թե՛ խաթարված էր հայ երաժշտության վրա ռուսական կոմպոզիտորական դպրոցի ազդեցության հետևանքով:

Մի կողմ թողնելով այս բավականին տարածված դիտարկման վիճելի եզրերը՝ անդրադառնանք միայն մեկին՝ «հետխաչատրյանական սերնդի» խաչատրյանական ուղիով ընթանալու հարցին: Իհարկե, անհնար է անտեսել Արամ Խաչատրյանի ազդեցությունը Էդվարդ Միրզոյանի և նրա սերնդակիցների կոմպոզիտորական ոճի ձևավորման վրա: Հատկապես ստեղծագործական կյանքի վաղ շրջանում Խաչատրյանն այս սերնդի ուղեցույցն էր: Էդվարդ Միրզոյանը, իր իսկ բնորոշմամբ, նրան իր Աստվածն էր համարում: Սակայն որքան մեծ էր Խաչատրյանի վառ անհատականության ազդեցությունը, նույնքան մեծ էր այդ ազդեցությունից դուրս գալու նրա ձգտումը և ինքնուրույն ձեռագրի ձևավորման անհրաժեշտության գիտակցումը: Մոսկվայում Հ. Լիտինսկու ղեկավարությամբ սովորելու տարիներին Էդվարդ Միրզոյանի Կվարտետում արձանագրված ոճական կտրուկ փոփոխությունը պայմանավորված էր հենց այդ հանգամանքով:

Հատկանշական է, որ դեռևս 1948-ին ներկա գտնվելով Է. Միրզոյանի «Թեմա վարիացիաներով» ստեղծագործության բեմելին՝ Արամ Խաչատրյանը խոսք անգամ չի արտահայտել այդ կապակցությամբ, ասես չի նկատել այդ գործը: Եվ երբ տասնամյակներ հետո բարձր է գնահատել նույն Կվարտետը, Է. Միրզոյանը դրանից եզրակացնում էր (ինձ հետ զրույցում), որ Արամ Իլյիչը, հնարավոր է, չէր հիշում Կվարտետի առաջին կատարմանն իր ներկա գտնվելու փաստը: Պարզ է, որ Խաչատրյանը գիտակցում էր, որ նոր սերունդը, կրելով իր ոճի որոշակի ազդեցությունը, ստեղծագործական որոնումներում այլ ճանապարհով է շարժվում, հերքելով ռուբենայան գույների խաչատրյանական հրավառությունը:

Տակավին երիտասարդ՝ 26 տարեկանում, 1947 թվականին գրված Կվարտետով (որը քարկոծվեց և չընդունվեց մասնագետների կողմից) Միրզոյանը կտրուկ փոխեց հայ երաժշտության զարգացման ընթացքը՝ տանելով այն դեպի ազգային խորը հոգեբանականությունը, դեպի **կոմիտասյան ուղին**, որը հատկապես գործիքային-սիմֆոնիկ ոլորտում դեռևս այնչափ խորությամբ չէր գիտակցված, ինչպես այսօր: Ստալինյան բռնապետության ամենադաժան տարիներին՝ հնչյունների և կերպարների մեգալոմանիայի դարաշրջանում, Միրզոյանն ապշեցրեց իր անկեղծ, ներանձնական ինտոնացիայով, ֆակտուրայի գծանկարային զսպվածությամբ, կամերային մասշտաբներով: «Թեմա վարիացիաներով» ստեղծագործության մեջ նա՝ առաջինը հայ կոմպոզիտորներից, կոնցեպտուալ սիմֆոնիզմ ներմուծելով կվարտետային ժանր, սիմֆոնիկ զարգացումը զուգակցեց վարիացիոն կառուցվածքի և պոլիֆոնիկ մտածողության հետ: Օգտվելով եվրոպական դասական սիմֆոնիզմի ավանդույթներից՝ նա իր խորը ազգային զգացողությամբ ստեղծեց հայկականի և համաշխարհայինի համաձուլման նոր՝ «միրզոյանական» որակ, ուր հայկականն ու եվրոպականը ուղղակի համընկնում էին և գրեթե չունեին «իրար հարմարվելու», աղձատվելու և ձևափոխվելու անհրաժեշտություն:

Այսպիսով, Էդվարդ Միրզոյանը առեղծվածային իր ոճում կարողացավ ընդհանրացնել երկու հսկաների՝ Արամ Խաչատրյանի և Կոմիտասի ավանդույթները: Ու տարիներ անց, ինձ հետ զրույցում, Միրզոյանը մեծ հուզմունքով անդրադարձավ այն հանգամանքին, որ այսօր արդեն մոռացվել է. Խաչատրյանը նույնպես իրեն համարում էր Կոմիտասի հետևորդ, որը նոր որակի մեջ զարգացնում էր կոմիտասյան ավանդույթները: Եվ ակնարկեց, որ այդ երկու դեմքերը, հակառակ ընդունված տեսակետի, չեն հակասում իրար, թեև շատ տարբեր են:

Դիրիժոր Էդուարդ Թոփչյանը անկեղծորեն նկատել է. «Էդվարդ Միրզոյանի մեջ ես տեսնում եմ հակասությունների պարադոքսալ միասնություն: Այս ամբողջապես «սովետական», համայնական կարգերին նվիրված մարդը չէր կարող, չպետք է գրեր այդ աստիճան խորը, դրամատիզմով լի, բացարձակապես անթերի ստեղծագործություն, ինչպիսին է նրա Սիմֆոնիան: Բայց գրել է՝ սա փաստ է»²: Իսկապես, Միրզոյանի առեղծվածը նրանում է նաև, որ այդ առաջին հայացքից հանդուրժող մարդը

2 **Еремян Л.** Эдвард Мирзоян в письмах и диалогах. Ер., “Тигран Мец”, 2011, с. 214.

ներքուստ իր մեջ կրում էր բողոքի մշակույթի (культура протеста)³ թաքնված հզոր լիցքեր, որոնք հայ երաժշտության մեջ ուղի հարթեցին դեպի «վաթսունականների» փիլիսոփայությունը: Սա ճանապարհ էր դեպի «шестидесятничество» կոչված բարդ երևույթը, երբ գաղափարական նոր սկզբունքներից ելնելով՝ բողոքարկվեցին մեծ սիմֆոնիայի կանոնները:

«Վաթսունականներ» հասկացությունն այնքան բազմանշանակ է, որ այն կիրառելը բավականին պատասխանատու է: Սակայն հենց այդ հասկացությունը կօգնի բացահայտելու Միրզոյանի անհատականության առեղծվածը: Վաթսունականության գաղափարը բնորոշվում է ոչ այնքան բացահայտ կամ թաքնված այլախոհությամբ, հակախորհրդային հայացքներով, որքան բողոքի մշակույթի դրսևորմամբ: Այն նշանավորվեց մոնումենտալությունից կամերայնության, ներանձնականության ձգտումով, և որ կարևոր էր՝ հումանիզմի և համամարդկային գաղափարների համար **անձնական պատասխանատվությամբ**: Վաթսունականների ներկայացուցիչներն անձամբ պատասխանատու էին այն ամենի համար, ինչ կատարվում էր երկրում և այդ պատճառով ոչ մի բանի հանդեպ չէին կարող անտարբեր լինել:

Անհատի արժանապատվության ու ազատության արժեքները հաստատվում էին ոչ թե խոսքով, այլ սեփական ստեղծագործությամբ, որին հատուկ էին **բարոյական սրված չափանիշները**: «Վաթսունականների շարժումը գործում էր իբրև **բարոյական կարգավիճակ**: Դա հասարակականի և անհատականի այնպիսի համադրություն էր, որում առաջինը թաքնված էր երկրորդում: Երբ ոչ թե հասարակական դիմակներն էին սառչում անհատների դեմքերին, այլ հասարակական դիմակների միջից առկայծում էին կենսաթրթիռ դեմքեր: Մեկուսացված, նույնիսկ օտարացած հասարակության մեջ չմեկուսացած գոյության այդ բացառիկ փորձը վաթսունականների շարժման ամենաբնորոշ հատկանիշն էր»⁴:

Դա արտահայտվում էր Էդվարդ Միրզոյանի թե ստեղծագործական և թե հասարակական դիրքորոշման մեջ: Նա իր մեջ կրում էր ազատ մտածողության, լայնախոհության, հնացած գաղափարական դոգմաները վերանայելու հզոր լիցքեր: Հենց այդ հատկանիշն առաջին հերթին Միրզոյանը փոխանցեց իր սաներին և ընդհանրապես՝ հաջորդ սերունդներին:

Էդվարդ Միրզոյանի երաժշտափիլիսոփայական և ոճական յուրօրինակության ամենացայտուն դրսևորումը դարձավ 1955-ին ստեղծված և 1962-ին գրառված Սիմֆոնիան լարայինների և գոսերի համար: Ինչպես նշում է Մ.Արանովսկին, Միրզոյանի Սիմֆոնիան խորհրդային սիմֆոնիզմի պատմության մեջ նշանավորեց անցում դեպի ժանրի «կամերայնացումը»: Սակայն, շարունակում է գիտնականը, այն չի կարելի դասել կամերային սիմֆոնիայի ժանրին, քանի որ ստեղծագործության չորս մասերում վերարտադրվում է դասական սիմֆոնիկ ցիկլի հակադրությունների և համադրությունների ողջ համակարգը⁵: Այսինքն՝ գործ ունենք որոշակի

3 Տե՛ս **Арановский М.** Симфонические искания. М., 1979, с.173-183.

4 **Гусейнов А. Н.** Мотрошилова и философы-шестидесятники. // **Мотрошилова Н.** Работы разных лет. М., 2006, с. 5.

5 Տե՛ս **Арановский М.** , նույն տեղում, էջ 182:

միջանկյալ, անցումային տարբերակի հետ, որը լիարժեքորեն չի համապատասխանում կամերային սիմֆոնիայի դասին և, դրանով իսկ, իրենից ներկայացնում է **Ժանրի մի յուրահատուկ տեսակ**, նոր կոնցեպցիա՝ որպես հակագոգեություն «մեծ սիմֆոնիայի» գերակշռող դերին:

Սա Միրզոյանի Սիմֆոնիայի ժանրային կամ ոճական բազմիմաստության միակ հատկանիշը չէ: Ավանդաբար Սիմֆոնիայի ոճն ընդունված է համարել նեոդասական⁶: Սակայն մեծակտավ այսպիսի գործի ստեղծումից կես դար անց, կարծում եմ, հնարավոր է վերարժևորել մոտեցումները: Կարևորն այն է, որ Սիմֆոնիայում, ինչպես նաև կոմպոզիտորի յուրաքանչյուր այլ ստեղծագործության մեջ, գոյություն ունեն իմաստային բազմաթիվ շերտեր, որոնք տարբեր մեկնաբանությունների հնարավորություն են տալիս: Եվ բոլոր այդ մեկնաբանությունները հնարավոր են: Հետևաբար կանգ չառնենք միակ հնարավոր տարբերակի վրա, այլ որոնենք նման մասշտաբային իրողության «բարդությունը»՝ որպես բազմաշերտ, բազմիմաստ փիլիսոփայական հասկացություն:

Ըստ իս, «նեոդասականությունը», որին միանշանակ դասում են Միրզոյանի ստեղծագործությունը, ոչ միայն չի բացահայտում Սիմֆոնիայի էությունը, այլև հեռացնում է իրական ըմբռնումից: Բարոկկոն, վաղ դասական ժամանակաշրջանը, խաբուսիկ կողմնորոշիչներ են Էդվարդ Միրզոյանի ոճի գնահատման համար: Կարծում եմ՝ նրա ստեղծագործության նեոդասական կոմպոզիցիոն կառույցը քողարկում է Սիմֆոնիայում նոր գեղագիտության ձևավորումը: Ինչպես հայտնի է, նեոդասականությունը երևան եկավ 20-րդ դարասկզբին՝ որպես ժամանակագրի հակաթեզ: Ի հայտ եկավ որպես ժամանակակից Անհատի սուբյեկտիվ հոգեբանությանը հակադրվող անանձնական, օբյեկտիվացված արվեստ: Բայց Միրզոյանը, իր Սիմֆոնիայի ակունքների մասին խոսելիս, հստակ նշում է այդ ակունքներից մեկը՝ Չայկովսկու «Մերենադը»: Սա նեոդասականության բացարձակապես այլ, հակադիր բևեռն է՝ զգացմունքայնության ազատության ժամանակակից աշխարհընկալման բևեռը: Ազատություն, որն առավելագույն չափով մոտեցրեց Մալերի բազմաշերտ ժամանակագր և էքսպրեսիոնիզմի դարաշրջանը:

Էդվարդ Միրզոյանը էքզիստենցիալ ուղղվածության ժամանակակից է: Ուշադրություն դարձրեք, թե ուր է տանում իր հարթած ուղին՝ այնտեղ, ուր զգացմունքները բացարձակապես ձերբազատված են: Անհնար է Միրզոյանին կատարել՝ առանց թեկուզ մեկ ակնթարթի «բաց թողնելու սանձերը»: Կուտակված ցավագին ապրումներն առավելապես էքսպրեսիոնիստականի կնիքն են կրում, քան նեոդասականի: Միրզոյանը բացառիկ տաղանդ ուներ հայացքն ուղղելու անհուն ողբերգականությանը և գտնելու այնպիսի խորքեր, որոնք համաշխարհային երաժշտական մտքի իսկական բացահայտումներ դարձան: Սիմֆոնիան ասես կոմպոզիտորի հոգում երկրաշարժ լինի, խորը հետք թողած հոգեկան ցնցում:

Ճիշտ այնպես, ինչպես պահպանելով սիմֆոնիկ ցիկլի կառույցը, Միրզոյանը կանխորոշեց կամերային սիմֆոնիայի ծնունդը, այդպես էլ

6 Տե՛ս Մ.Արանովսկու, Մ.Ռուսկյանի, Ն.Շահնազարովայի, Ս.Սարգսյանի և ուրիշների ուսումնասիրությունները:

նեոդասական մոդելի շրջանակներում նա գնաց դեպի խոր հոգեբանականության ոլորտը՝ ստեղծելով հակադիր երևույթների առեղծվածային միասնություն:

Էդվարդ Միրզոյանի ստեղծագործությունը 20-րդ դարի արվեստի տիպական դրսևորումն է՝ բազմաթիվ ուղղությունների սինթեզի իր հմայիչ ուժով: Սակայն նրա ստեղծագործության գլխավոր, առանցքային ավանդույթը դարձավ Կոմիտասի տիեզերականությունը, որն առաջին անգամ արտացոլվեց հայ սիմֆոնիկ երաժշտության մեջ: Դա նաև հայ սիմֆոնիկ երաժշտության մեջ որոշարկված՝ ազգայինի խտացում է, որը կատարյալ է իր դասական հավասարակշռվածությամբ ու պարզությամբ, սակայն խոր արտահայտչական է հուզական ազդեցության ուժով, հայկական մոնոդիայի պոլիֆոնիկ բազմաշերտ էությամբ և արտահայտչամիջոցների ծայրաստիճան բժախնդի ընտրությամբ ու հագեցվածությամբ:

Summary

EDWARD MIRZOYAN. MAN AND WORK

In living memory of the great composer and a unique person

Lilit. K. Yepremyan

The article is an attempt to newly reconsider the role and the meaning of Edward Mirzoyan in the history of the Armenian music. Here we've underlined that he was always finding some extraordinary ways to get beyond the bounds of determinations (form, style, genre, tendency) combining the incompatible and creating new and original quality, which was becoming regularity for the generations. Some particular attention is paid also to the original world-view of Edward Mirzoyan during the formation of the movement of "sixties". The universality of Komitas became the main and principal tradition of his art, which was also reflected for the first time in Armenian symphonic music.